Նախամրցութային պարզաբանումներ

ՀՆՀ # 150221-01 Մրգաշատ գյուղի ոռոգման համակարգի ընդլայնման ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացման մրցույթ

N	Հարց	Պատասխան
1	Որպես հայտարարված մրցույթի համար ներկայացվող նմանատիպ աշխատանք կարող ենք ներկայացնել նախորդ տարի մեր ընկերության կողմից Հայաստանի գյուղական համայնքներից մեկում ջրաքաշման (դրենաժի) շինարարական աշխատանքները: Արդյո՞ք կարող ենք մասնակցել մրցույթին:	Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացող կազմակերպությունները, սակայն ներկայացված հայտը վավեր չի լինի, եթե այն չհամապատասխանի մրցույթի հրավերի պահանջներին: Մասնավորապես, մրցույթի հրավերի 3-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը վերաբերում է «ոռոգման ցանցի» կառուցման աշխատանքներին: Առանձին դեպքերում, ծրագրի անվանումը (մասնավորապես՝ դրանում «ոռոգման ցանց» բառերի բացակայությունը) կարող է անտեսվել, եթե իրականացված ծրագրում ակնհայտորեն առկա են եղել կառուցվելիք համակարգի հիմնական տարրերը, տվյալ դեպքում՝ փականային հանգույց, ճնշումային պոլիէթիլենային ջրագիծ, ջրթող կառուցվածք: